

որից, եթէ հաշուելու լինենք, մի 25,000 նոյնիակ 30,000 պ. ներմուծած Պարսկաստանից, այնուամենայնիւ այս տարուայ բերքը մօտ 600,000 պ. կը լինի:

Եւ եթէ վերցնենք նոյնիակ 550,000 պուղ, ոչ 600,000 և այս սեզոնում գոյութիւն ունեցող գները, կը տեսնենք որ այս տարի Երևան բամբակի արտահանութիւնից մօտ է 550,000 $\times$ 11 բուր. = 6,050,000 բ. փող, մի գումար, որը չի մտնիլ միւս բոլոր բերքերի արտահանութիւնից միասին վերջորած:

ԳԻՆՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇ-ՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Երևանի նահանգի այն մագերում, ուր ժողովուրդը մեծ մասամբ պարապում է այգեգործութեամբ և տարէցտարի աւելայնում է խաղողի վազերի պլանտացիաները, ինկատի ունենալով կոնիակի գաւառների բազմաձևը և նրա հետ միաժամանակ զինու մեծ պահանջը, առաջ է եկել մի հարց, որը կենսական նշանակութիւն ունենալով ժողովրդի համար՝ պահանջում է բաւարար լուծում:

Երևանի նահանգի երկու գաւառներում, առանձնապէս այդ գաւառների զաշտային և տաք կլիմա ունեցող տափարակ մասերում ժողովուրդը պարապում է քիչ բացառութեամբ այգեգործութեամբ: Թւերով խօսենք:

1900 թ-ի Երևանեան նահանգի խաղողի այգիների բոնած 10298 դեռեատին տարածութեան 5448-ը հաշուած է միմիայն Երևանի գաւառում, իսկ 300—էջմիածնի գաւառում. եթէ ընդունենք, որ այդ տարածութիւնը իր աճեցողութեան այժմեան չափով³ տարուայ ընթացքում մեծացել է մի-չորրորդ մասով կամ նոյնիակ մի հինգերորդականով, մենք կը ստանանք մօտ 10,000 դեռեատին տարածութիւն, որը բոնուած է խաղողի այգիներով և որը ընկած է երկու, այն է Երևանի և էջմիածնի գաւառների՝ այն էլ յայտնի՝ չրջաններում: Հասկանալի է որ այդ չրջաններում ժողովրդի գլխաւոր և նոյնիակ միակ պարապմունքն ու ապրուստի միջոցը կազմում են խաղողի այգիները. մանաւանդ որ այդ տեղերում ազդարնակութիւնը չափ խիտ է բնակուած, և զգալի է հողի մեծ պակասութիւն:

Այգայիսի չրջաններ կարելի է թւել էջմիածնի գաւառում Ղզլթամուրի և Վաղարշապատի հասարակութիւնները պոլի-յիակոն առաջին մասում, Ղուրդուղուլիի, Սարգարաբատի և

Շահերիարի հասարակութիւնները պոլիցիական երկրորդ մասում: Իսկ Երևանի զաւառում Կոյլասարի, Օղուրբէզլուի, Դփին-Ասուրիի և Ղամարլուի հասարակութիւնները պոլիցիական երրորդ մասում, որտեղի ազգաբնակութիւնը իսկապէս շահագրգռուած է այս հարցով, որպէս պարագմունքի և ապրուստի միակ միջոցով:

Խաղողի մշակութիւնը իր տնտեսական և բարդ աշխատանքներով հանդերձ մեր ժողովրդի համար ներկայացնում է մի ոչ այնքան էլ շահաւէտ պարագմունք, զոնէ ներկայ պարագաներում:

Գինեգործութիւնը զարգայած չէ, ինքը ժողովուրդը իր բերքը մշակել, արգիւնաբերել և արտահանել չի կարողանում. խօսքս անհատներին մասին չէ, որոնց կարելի է պատահել իւրաքանչիւր մի գիւղում: Եւ նա ստիպուած է ծախել իր բերքը նոյն գրութեամբ, ինչ գրութեամբ տալիս է նրան այգին անմիջապէս: Իսկ խաղողը փչացող, ջուր դարձող մթերք է, «թաց մայա է», ինչպէս ժողովուրդն է ասում: Որքան էլ գինեգործութիւնը զարգացման ստոր աստիճանի վրայ է կանգնած մեղաւորում, այնուամենայնիւ գինին աւելի շահաւէտ գնով կարելի է վաճառել, քան խաղողը, բայց խաղողը ամանելու համար հարկաւոր է տեղ, որից զուրկ է գիւղացին: 10—15 խալվար խաղողը կամ նրա չիրան ամանելու համար հարկաւոր է առնուազը մի տուն և 10—15 հատ կարասներ, որոնց ունենալը վեր է իւրաքանչիւր սովորական գիւղացու ուժերից, և այս հանգամանքը դարձել է զգաւորչու ձեռքում մի զէնք խեղդելու խաղողատիրոջ, կէս գնով առնելու նրա բերքը: Խաղողի քաղը սովորաբար սկսում է սեպտեմբերի վերջերին և աւարտում է հոկտեմբերի սկզբներին, որից յետոյ իւրաքանչիւր ուշացած օրը մնասում է խաղողին, չուացնում, չամիչ դարձնում և ինչպէս ասում են՝ քաչից գցում, հաբամում գինեւորոջ վրայ իր բերքը: Այս գրութիւնը զգալի էր աւելի մանաւանդ այս տարի, քանի որ խաղողի բերքը չափազանց առատ լինելու հետ միաժամանակ՝ չորսիւ բարեկաջող տար և չոր եղանակի՝ բերքը շուտ հասաւ, և այգեկութը շուտ սկսուեց:

Խաղող գնում են մէկ տեղացի հարուստ գործարանատէրերը, որոնք պարագում են օդի և գինեգործութեամբ, և երկրորդ՝ Երևանում եղող կոնսակ պատրաստող մի քանի հարուստ ֆիրմաներ: Ահա այդ մարդկանց քմահաճոյքից էլ կախում է խաղողատիրոջ բաղդը: Դրանք այս տարի խօսքերը մէկ արած՝ խալվարին 12 բուրլուց աւելի գին չէին տալիս: Գիւղացիները զիմում էին նրանց, խնդրում, ազաչում, պաղտաւում օրինաւոր

գին անել, մագանդա կտրել, խաղողը կշռել, ընդունել, աղատել փշանալուց, չամիչ դառնալուց, մի խօսքով՝ ջուր կտրելուց, բայց գնողները չէին զիջանում, քանի ուշ, այնքան լաւ նրանց համար:

Եւ այսպէս չարաթներ խաղողը չորանում, քաշից ընկնում էր, իսկ գնողները մօտ չէին գնում, մինչև որ գիւղացին ստիպուած խալվարը (30 պուդ) 20 բուրլի արժեցող խաղողը կիսով չափ պակսելուց յետոյ ծախսից է 12, ամենաշատը 15 բուրլով:

Միակ միջոցը, որով կարելի է կուել չարիքի դէմ, այդ համապատասխան գործունէութիւնն է, որ և միջոց կը տայ գիւղացուն չ'ընկնել կեղեքողի ձեռքը:

Դեռ մօտիկ անցեալում Երևանի մի քանի շրջաններում միտը ծագեց կաղմակերպել ընկերութիւններ՝ գիւղական դասը վաշխառուների ցանցերից ազատ պահելու համար օգնութեան գալով և փոխարինաբար դրամ բայ թողնելով նրան՝ որքան կարելի է էման տոկոսով: Այդ կաղմուկիք ընկերակցութիւններից մէկի ծրագրում յիշուած էր նաև միջնորդ հանդիսանալ գիւղացու և գնողի մէջ հում բերքերը վաճառահանելու խնդրում:

Այս կէտը ծրագրի մէջ մտցրուած էր այն պահանջմամբ, որ գիւղացին մասամբ զրամի կարիքից ստիպուած և մասամբ բերքերը պահելու, ամբարելու հնարաւորութիւնից զրկուած՝ ամենաչնչին գնով ծախում է իր դաշտային բերքերը: Մինչդեռ բաւական էր փողով օգնութեան հասնել և մթերքը ամբարելու յարմարութիւններ տալ, որ նա մէկին երկու աւելի նիւթական չափ ստանար իր բերքերի համար:

Գեղեցիկ ծրագիրների, բայց որոնք մինչև այժմ էլ փնտրին լոկ ծրագիրներ:

Սակայն եթէ այդպիսի բարդ ծրագրներով ընկերակցութիւններ գոլիս բերելը այնքան էլ զիւրին գործ չէր, որը կարողանար օգնութեան գալ նաև խաղողի մշակութեամբ պարապող գիւղական դասին, միթէ՞ հնարաւոր չէր իւրաքանչիւր գիւղում ճիմնել շիրայի կամ գինու հասարակական շտեմարան, որտեղ ամբարելով գիւղի բերքը՝ կարելի կը լինէր պահել լաւ օրերի, յաջող դէպքերի:

Իհարկէ՝ հնարաւոր է և շատ հնարաւոր:

Բաւական է որ իւրաքանչիւր գիւղ ունենայ իր համար մէկ կամ մի քանի հասարակական ընդարձակ շտեմարաններ, որի կառուցանելը դժուար չէ մանաւանդ Արարատեան դաշտում, ուր պատերը շինում են ցեխից, ծածկի փայտը կարելի է գտնել տեղում, իսկ աշխատանքները կարելի կը լինէր կատարել

համայնական կերպով: Միակ բանը, որին պէտք է վճարել դրամ, այդ ամանները կամ կարամներն են, որոնց համար եթէ յատկացուէր 1000—1500 բուբ., կարելի կը լինէր գնել 300—400 հատ, որոնք բաւականութիւն կը ապին մի գիւղի չքաւոր համայնքին: Այնպէս որ իւրաքանչիւր գիւղացու համար հասարակական բնակարանը կը ծառայի նրան որպէս պահեստ, ուր ամբարեկով համայնքի բնիկը՝ հասարակութեան կողմից ընտրուած երեք կամ չորս հաւատարիմ անձանց հսկողութեան տակ, կը պահուի և կը վաճառուի, երբ օրինաւոր գին տուող կը լինի, և ստացած դրամները կը բաժանուեն գինեւոցներին համապատասխան իւրաքանչիւրի ունեցած խաղողի քանակութեան:

Թէ որպիսի յարմարութիւններ կը ստեղծուեն այս շտեմարանների շնորհիւ գիւղացու համար, պարզ է: Միայն հարկաւոր է ընդհանրացնել այդ միտքը, համայնական ուժերով գործելու, չարիքի դէմ կռուելու այս ծրագիրը:

Չը պէտք է մոռնալ, որ ընտրուած մարդիկ իրանց ձեռքի տակ ունեցած գինու երաշխաւորութեամբ հնարաւորութիւն կ'ունենան էժան տոկոսով դրամ գտնել և բաժանել գիւղացուն՝ մինչև գինիների կամ մթերքի վաճառելը:

Ա.-Դ.Օ.